լու, թէ ի՞նչ պատասխան ստացուեց Լոնդոնից, բայց թւում է, թէ այդպիսի մի թանկագին փաստաթուղթ նամակ չէր կարող միանգամից անուշադիր թողնել։ ... Եւ հմուտ հեղինակն առաջ է գնում փաստացի տուեալներով ու տարբեր ժամանակներում երևան եկած հրատարակութիւններով հաստատել ու միանգամ ընդմիշտ մի պայծառ լոյս սփռել Խոջա Պետրոս մարդու մաքուր նկարագրի վրայ, ցոյց տալով նրան իբրեւ ճշմարիտ, հաւատարիմ, ազնիւ հոգի, որը մինչև անգամ իր կեանքը վտանգի ենթարկելով օգնեց անգլիացիներին նրանց կարիքի ժամանակ ...։

Կալկաթա ԱՐՏԱՇԵՍ Թ. ԱԼԼԱՀՎԵՐԴԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ. Դրեց՝ Բարգէն Եպս. Գիւլլէրեան. Ուսումնասիրութիւններ, Հայ. Եկեղեցոյ Բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ։— Հայ. Եկեղեցոյ դիրք. Քրիստ. Ընդհ. Եկեղեցոյ մէջ։— Առաքելականութիւն Հայ. Եկեղեցոյ։ — Պետութիւն եւ Եկեղեցի։ Տպագր. Երուսաղէմ, 1930. 8° էջ ժ + 355։

Ս. Աթոռոս Տպարանէն նոր լոյս տեսաւ այս յոյժ կարեւոր գիրքը, որ Սիոն Ամսագրին 1927–1930 տարուան չորս շարք խմբագրականներուն արտատպութիւնն է, Սիոնի ողջագոյն ընթերցողներէն ոմանց փափաքին համաձայն գրքոյկի վերածուած, «որպէսզի կարելի ըլլայ աչքի առջև ունենալ ուսումնասիրութեանց այդ շարքը իրենց անընդհատ ամբողջութեանը մէջ, ի հարկին անդրադառնալու համար ատոնց վրայ», ինչ որ հեղինակին ալ փափաքն է եղած։

Բովանդակութիւնը ինքնին կը խօսի անոր արժէքին մասին.—

Ա. Հայաստանեայց Եկեղեցոյ Բարեկարգութեան Վերաբերեալ Խնդիրներ.— Ա, Բ, Գ, և Դ (Բառերու առհմանում, պատմական տեղեկութիւններ, աղբիւր).— 1. Եկեղեցւոյն շէնքը.— 2. Եկեղեցոյ ժողովուրդը.— 3. Եկեղեցոյ դաւանանքն ու պաշտամունքը.— 4. Եկեղեցոյ պաշտօնէութիւնը.— Ա. Կոչում.— Բ. Նկարագիր.— Գ. Ուսում.— Դ. Կենցաղ.— Ե. Ապրուստ.— Եղբակցութիւն.— Հայ Եկեղեցոյ արդի վիճակը [Յաւելուած]։

Բ. Հայաստանեայց Եկեղեցոյ դիրքը Քրիստոնեական ընդհանուր եկեղեցոյ մէջ։

Գ. Առաքելականութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ.— Ա. Լուսաւորչէն յառաջ Քրիստոնէութիւն կայ Հայաստանի մէջ.— Բ. Տերտուղիանոսի ակնարկածը Մեծ Հայքն է.— Գ. Սանատրուկ Հայոց Թագաւոր.— Դ. Աւանդութիւն է Պետրոս Առաքելի Հռոմի մէջ եկեղեցի հիմնելը։

Դ. Պետութիւն եւ Եկեղեցի.— Ա.— [Սահմանումը բառերու և ասացուածներու].— Բ. [Եկեղեցւոյ պետականացման ծագումը և Պետութեան ու Եկեղեցւոյ բաժանման խնդիրը Հռոմի Եկեղեցւոյն մէջ].— Գ. [Պետութեան և Եկեղեցւոյ բաժանումը Ֆրանսայի մէջ].— Դ. [Հայաստանեայց Եկեղեցւոյ դիրքը հանդէպ իր վրայ տիրող կառավարութիւններու].— Ե. [Հայոց Կաթողիկոսներուն կրկին պաշտօնները].— Զ. [Կաթողիկոսներու և Պատրիարքներու իրապէս քաղաքական գործունէութիւնը].— Է. [Թիւրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը եւ Ազգային Սահմանադրութիւն].— Ը. [Պոլսոյ Էնիէ կամ Բարձրագոյն Կարգադրութիւն].— Թ. [Խորհրդային կարգեր.— Եկեղեցին Անգլիոյ մէջ և Եկեղեցին Ամերիկայի մէջ]։

Դերաշնորհ Հեղինակին լուսանկարը կայ ի մուտս գիրքին։ Ուսումնասիրութեան համար առաջադրուած նիւթերը իրենց գլխաւոր ստորաբաժանումներով քննուած, լուսաբանուած, դասաւորուած ու եզրակացութեան մը բերուած են։ Եւ այդ մանրակրկիտ և խղճամիտ ուսումնասիրութիւններուն մէջ աւանդութիւնն ու պատմութիւնը, ներհայեցութիւնը ու արամաբանութիւնը ընձեռած են իրենց տրամ միջոցները։ Միայն մէկ բան կը պակսի՝ Սրբազանի կամքէն անկախ պատճառներով՝ — Կիրարկութիւնը։

Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութիւնով, արդի կացութեամբ եւ մանաւանդ անոր բարեկարգութեամբ հետաքրքրուող ու նախանձախնդիր ոեւէ անձի ոչ թէ «սեղանի գարդ»ը պէտք է կազմէ՝ այլ անոր ձեռքին մէջ պէտք է որ «բաց գիրք»մը ըլլայ Հայ Եկեղեցին՝ որ հայ արդի եկեղեցականութեան բարձրաստիճան եւ ձեռնհաս դէմքերէն մէկուն կողմէ հանրութեան կը հրամցուի՝ մասնագիտօրէն պատրաստուած, խնամքով տպագրուած և դիւրամատչելի գինով։

ՇԱՒԱՐՇ ՎԱՐԴԱՊԵՏ

digitised by A.R.A.R.@